«ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ
ARMENIAN WATER AND SEWERAGE CJSC

www.armwater.am

ՀՐԱՎԵՐ

12.03.14թ N: գմ1-03/543

Ձեր N: ____________

“Հայջրմուղկոյուղի”ՓԲԸ-ի կարիքների համար՝ ***հանդերձանքի*** ձեռքբերման

Հարգելի տիկնայք և պարոնայք

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***-ի (այսուհետև՝ Գնորդ) կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերել Գնումների աջակցման կենտրոնի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 4-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ***ապրանք:*** Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում ***«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/13»***:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ***ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ*** հասցեով, մինչև 2014թ. մարտի 24-ը, ժամը՝ 15:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար *Անդրանիկ Մանուկյանը*: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն ***ք.Երևան, Վարդանանց փակ.8, 6-րդ հարկ*** հասցեում, 2014թ. մարտի 24-ին, ժամը՝ 15:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***-ի կարիքների համար՝ ***բանվորական արտահագուստի և կոշիկների*** ձեռքբերումը:

“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի կարիքների համար՝ ***բանվորական արտահագուստի և կոշիկների*** մատակարարման (որոնք կազմված են՝ ***2*** չափաբաժիններից՝ **<u>նմուշների ներկայացնելը պարտադիր է</u>**) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում ***(Հավելված N1)***, ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ ***(Հավելված N2):*** Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10**» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Մասնակիցը հայտով ներկայացնում է առաջարկված ապրանքի ծագման երկիրը իսկ համարժեք ***գնման առարկայի*** դեպքում՝ ներկայացնում է համարժեք ***գնման*** առարկայի անվանումը և ծագման երկիրը (ըստ պահանջի):

“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ mak@armwater.am:

Հեռախոս՝ (010) 54-28-76:

Պատվիրատու՝ ***“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ***

Տեխնիկական տնօրեն/Գնումների հանձնաժողովի նախագահ Վ. Մելքոնյան

Գլխավոր գրասենյակ
ՀՀ, ք. Երևան, 0010,
Վարդանանց փակուղի 8

Head Office
8 Vardanants blind alley,
Yerevan, 0010, Armenia

«Հյուսիս-Արևմտյան» տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Աբովյան, 2201, Սարալանջ 2

"North-West" Regional Branch
2 Saralanj street, Abovyan, 2201, Armenia

«Կենտրոն-Արևմտյան» տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Արտաշատ, 0701, Արազի 14

"Center-West" Regional Branch
14 Araz street, Artashat, 0701, Armenia

«Հարավային» տարածքային մասնաճյուղ
ՀՀ, ք. Սիսիան, 3501, Ն. Ադոնցի 11

"South" Regional Branch
N. Adonts 11, Sisian, 3501, Armenia

1-71
info@armwater.am

Հավելված 1
«**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10**» *ծածկագրով*
ընթացակարգի հրավերի

*N «**ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/13**» ծածկագրով*
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Դ Ի Մ ՈՒ Մ
Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին
մ ա ս ն ա կ ց ե լ ու

_____-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

"Հայջրմուղկոյուղի" ***ՓԲԸ***-ի կողմից N***«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/13»*** ծածկագրով

հայտարարված ընթացակարգի_____չափաբաժնին (չափաբաժիններին)
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

_____-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

_____-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

_____-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_____:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

_____ _____
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«_____» _____ 20..թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 2
«**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10**» *ծածկագրով*
ընթացակարգի հրավերի

N «ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/13» ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Գ ն ի ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N «-.....-» ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ...-ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

(ՀՀ դրամ)

Չափա-բաժինների համարները	Գնման առարկայի անվանումը	Արժեք*	ԱԱՀ**	Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /տառերով և թվերով/
1	*2*	*3*	*4*	*5=3+4*
1	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>>			
2	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>>			
3	<<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>>			
...	...			
...	...			

3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:
****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը ներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

.....
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

.....
(ստորագրությունը)

Կ. Տ.

«.....» ..... 2014թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հանդերձանքի գնման պայմանագիր
N *«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/13»*

ք.Երևան 2014թ.

“Հայջրմուղկոյուղի” ՓԲԸ-ի դեմս գլխավոր տնօրեն Պ.Լորենի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից և ***ՍՊԸ-ի*** դեմս Ընկերության տնօրեն (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ***բանվորական արտահագուստի/կոշիկների*** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով

նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Հետ տանել Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.7 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.8 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.9 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է՝

ՀՀ դրամ: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա 10 բանկային օրվա ընթացքում:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով ՀՀ Ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է ..... էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2 և 3, 4 հավելվածները՝ բաղկացած ..... թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.8 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գ Ն Ո Ր Դ	**Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ**
¦Ð ³ÛçñÙáõÕÏáÛáõÕÇ§ ö´À	
ù. ºñ¨ ³Ý, ì ³ñ¹ ³Ý ³Ýó ÷ ³ÏáõÕÇ 8 ³	
¦ ì î´ Ð ³Û ³ë ï ³Ý ´ ³ÝÏ§ ö´À	
Ñ/Ñ 160485054425, Ð ì ÐÐ 02509667	
Գլխավոր տնօրեն Պ.Լորեն	
Կ.Տ (ստորագրություն)	Կ.Տ (ստորագրություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Չափաբաժին-1

Ամառային բանվորական արտահագուստ

<table>
<tr><td rowspan="4">Արտահագուստի կոմպլեկտ</td><td>Պիջակ՝</td><td>Առջևի մասում 2 կողային ներկարված գրպան և ձախ կրծքի մասում 1 գրպան կափույրով՝ ընկերության տարբերանշանով (ասեղնագործված), առջևի մասում՝ մեկ շարքով տեղադրված կոճակներ (6 հատ) կափույրով, լուսանդրադարձնող ժապավեններով (դեղին գույնի), մեջքի մասում՝ ասեղնագործված լինի 50մմx300մմ-ի վրա ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ:</td></tr>
<tr><td>Տաբատ՝</td><td>Ուղիղ կարվածքով, առջևի մասում տեղադրված լինի շղթա, առջևի երկու գրպանով, լուսանդրադարձող ժապավեններով (դեղին գույնի), ձախ գրպանից ներքև՝ ասեղնագործված լինի ընկերության տարբերանշանը:</td></tr>
<tr><td>Գլխարկ՝</td><td>Բաղկացած՝ թասակից և ճակատային մասից (հովհար): Թասակի առջևի մասում՝ ասեղնագործված լինի ընկերության տարբերանշանը:</td></tr>
<tr><td>Մայկա՝</td><td>2 հատ, բաց կապույտ գույնի, կարճաթև, ընկերության տարբերանշանով՝առջևի մասի ձախ կողմում:</td></tr>
<tr><td colspan="2">Կտորը</td><td>52-53% բամբակ և 47-48% պոլիէստեր, խտությունը՝ 240-260գր/մ2, ջրադիմացկուն: Կտորը համապատասխանի ГОСТ 11209-85 <<Ткани хлопчатобумажные и смешанные защитные для спецодежды. Технические условия>> ստանդարտի պահանջներին:
<u>Կտորի փորձարկման հավաստագրի առկայությունը պարտադիր է:</u></td></tr>
<tr><td colspan="3">Յուրաքանչյուր արտահագուստի կոմպլեկտ ունենա ներսի կողմում կարված հաշվառման պիտակ ՀՋԿ-1, ՀՋԿ-2, ՀՋԿ-3 և այլն:</td></tr>
<tr><td colspan="3">Արտահագուստը պետք է կարված լինի <<ГОСТ 27575-87 Костюмы мужские для защиты от общих производственных загрязнений и механических воздействий. Технические условия>> ստանդարտին համապատասխան:</td></tr>
</table>

Քանակները ըստ չափերի	Չափսը	Քանակը /(կոմպլեկտ)
	46	9
	48	46
	50	88

	52	66
	54	27
	56	13
	58	1
	60	5
	64	1
Ընդամենը	256 կոմպլեկտ	

Չափաբաժին-2

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Մ Ա Ս Ն Ա Գ Ի Ր

Ամառային բանվորական կոշիկ

Կաշվից կոշիկ՝ կապվի քուղերով, նվազագույն պատռման ուժը 120 Ն, մետաղական ենթաքթամասով՝ ոտքի մատները պաշտպանելու 200 Ջ-ին համարժեք առարկաների անկման հետևանքով առաջացող տրավմաներից և 15 կՆ սեղման ուժի ազդեցությունից պաշտպանելու համար, յուղադիմացկուն ներբան: Կից սերտիֆիկատով՝ ГОСТ Р EN-ISO 20345 – 2011 ստանդարտի պահանջների համապատասխան:

Քանակները ըստ չափսերի	Չափսը	Քանակը /(զույգ)
	38	2
	39	4
	40	21
	41	85
	42	91
	43	37
	44	11
	45	7
	46	1
Ընդամենը	*259 զույգ*	

Հավելված N2
N ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/13 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ՀՀ դրամ/

Չափա բաժնի համարը	Ապրանքի անվանումը	Չափ. միավ.	Միավ. գինը	Նախատեսվում է ձեռք բերել 2014 թ.-ին Ապրիլ,		Ընդամենը /հազ.դրամ/	
				քանակ	գումար	քանակ	գումար
1	2	3	4	5	6	7	8
1	Ամառային բանվորական արտահագուստ	կոմպ.		256		256	
2	Ամառային բանվորական կոշիկ	զույգ		259		259	
Ընդամենը՝			x	x	x	x	

ԳՆՈՐԴ

¦Ð³ÛçñÙáõÕÏáÛáõÕÇ§ ö´À

ù.ºñ¨³Ý, ì³ñ¹³Ý³Ýó÷³ÏáõÕÇ 8³

¦ì î´Ð³Ù³ëï³Ý´³ÝÏ§ ö´À

Ñ/Ñ 160485054425, Ð ì ÐÐ 02509667

Գլխավոր տնօրեն Պ.Լորեն

Կ.Տ (ստորագրություն)

ՎԱՃԱՌՈՂ

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N3
N ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՀՋԿԸ-ՇՀԱՊՁԲ-11/10-14/13 գնման պայմանագրի

Վճարման ժամանակացույց

N	Անվանումը	Նախատեսվում է ձեռք բերել 2014 թ.-ին, պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո, ընդ որում՝									Ընդամենը /հազ.դրամ/
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Ամառային բանվորական արտահագուստ		100%								100%
2	Ամառային բանվորական կոշիկ		100%								100%

Գ Ն Ո Ր Դ

¦Ð³ÛçñÙáõÕÏáÛáõÕÇ§ ö´À

ù.ºñ¨³Ý, ì³ñ¹³Ý³Ýó÷³ÏáõÕÇ 8³

¦ì î´ Ð³Û³ëï³Ý´³ÝÏ§ ö´À

Ñ/Ñ 160485054425, Ð ì ÐÐ 02509667

Գլխավոր տնօրեն Պ.Լորեն

Կ.Տ (ստորագրություն)

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված 4
,_____ե _____ 2_____թ. կնքված
N _____ պայմանագրի հավելված

Գնորդ

_____

_____

_____
հասցե_____
հհ_____

_____
հվհհ_____

Վաճառող

_____

_____

_____
հասցե_____
հհ_____

_____
հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ___

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

,_____ե _____ 2_____թ.
Պայմանագրի անվանումը՝ ,_____ե:
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ ,_____ե _____ 2_____թ
(Համաձայնագրի կնքման ամսաթիվը)
Պայմանագրի համարը՝ _____
Գնորդն, ի դեմս _____ և Մատակարարն՝ ի դեմս _____, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի (Համաձայնագրի) կատարման վերաբերյալ ,_____ե _____ 2_____թ կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N_____ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով (Համաձայնագրով) նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով (Համաձայնագրով) ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի (Համաձայնագրի) շրջանակներում Վաճառողը ,_____ե _____ 2_____թ.-ից ,_____ե _____ 2_____թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	----------	----------		----------

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____

Կ Տ

Ապրանքն ընդունեց

_____
(ստորագրություն)
ազգանուն _____

Կ Տ